«Ա.Դ.Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ
«Армянский центр защиты прав человека им. А.Д.Сахарова»
«The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre» NGO

ՀՀ, 0009 ԵՐԵՎԱՆ, Սարմենի 1 1 Sarmen St., 0009 YEREVAN, ARMENIA РА, 0009 ЕРЕВАН, ул. Сармена 1
(37410) 54-29-36, 58-78-64, 56-15-05 Fax: (37410) 561505 e-mail: sakhfd@arminco.com , www.sakharovcenter.org

23 հունիսի 2017 թ. Ե-2496

ՀՀ զբոսաշրջության պետական կոմիտեի
նախագահ Զարմինե Զեյթունցյանին

Հարգելի տիկին Զեյթունցյան,

Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն է դիմել ԱՄՆ քաղաքացի Պատրիսիա Դոդը (Patricia Dodd), որը գտնվում է Հայաստանում որպես զբոսաշրջիկ:

Պատրիսիա Դոդը շատ հետաքրքրված է Հայաստանի պատմությամբ, մասնավորապես Հայոց ցեղասպանությամբ, հիացած նրա բնությամբ, նաև պատրաստվում է մեկնել Արևմտյան Հայաստան:

Ուղևորության ընթացքում, նա One way tour տուրիստական ընկերության միջոցով այցելել է Վայոց ձոր և եղել Արենի-1 քարանձավում: Այս այցելությունից նրա վառ տպավորությունները ստվերվել են մի տհաճ միջադեպով. Արենի-1 մտնելիս նրանից և մյուս զբոսաշրջիկներից յուրաքանչյուրից պահանջել են հազար դրամ մուտքավճար, սակայն գումարը ստանալուց հետո նրանցից և ոչ մեկին վճարման կտրոն չեն տվել, որից էլ Պատրիսիան ենթադրել է, որ դրամը ապօրինի է գանձվել: Ի պատասխան նրա և Մեծ Բրիտանիայից մեկ այլ զբոսաշրջիկի՝ կտրոն տրամադրելու պահանջին, նրանք արժանացել են գումար գանձող մարդու, ինչպես նաև տուրիստական ընկերության աշխատակցի շատ կոպիտ արձագանքին, որից նրանք շատ էին վրդովվել...

Հարց է ծագում, **արդյոք իրավաչա՞փ են տվյալ անձնավորության գործողությունները**: Եթե իրոք քարանձավի մուտքը վճարովի է, ապա ինչո՞ւ «տոմսավաճառը» զբոսաշրջիկներին չի տրամադրել վճարման կտրոն: Ավելորդ ենք համարում նշել, որ նրա արտաքին տեսքը ամենևին վստահություն չի ներշնչում: Պատրիսիա Դոդը լուսանկարել է մուտքավճար գանձող անձնավորությանը, որի լուսանկարները կից ներկայացվում են:

Դիմելով Ձեզ, խնդրում ենք պարզաբանել սույն հարցը, քանի որ ՀՀ կառավարության և մասնավորապես Ձեր գլխավորած կոմիտեի ջանքերն ուղղված զբոսաշրջության զարգացմանը Հայաստանում հաջողությամբ կպսակվեն, եթե տեղերում զերծ մնանք նման միջադեպերից, և ամեն ինչ իրականացվի օրինական կարգով:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Լևոն Ներսիսյան
Սախարովի կենտրոնի տնօրեն